ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ՍԵՎԱՆ ԱԿՎԱ» ՓԲԸ - ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության իմասին

Գտնվելու վայր՝ Խաչաղբյուր
Աշխատակիցների թվաքանակ՝ 22
Հիմնադրման տարեթիվ՝ 2015
Հիմնական ապրանքատեսակներ՝ ամառային, գեղարքունի, սևանի և ծիածանախայտ իշխաններ
Հիմնական շուկան՝ Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ
Հավաստագրում: ISO 9001, HACCP (ընթացքում է)

«Սևան Ակվա»-ն պետական, ձկնաբուծական ընկերություն է: Ձեռնարկությունը, որը ստեղծվել է 2015 թվականին Սևանա լճում ձկան պաշարների վերականգնման նպատակով, շարունակել է իրականացնել իր բնապահպանական պարտականությունը և պահպանել իշխան ձկան վերարտադրությունն ու զարգացումը: Գտնվելով Ազգային պարկի սահմաններում՝ ընկերությունը վարում է մաքուր արտադրության քաղաքականություն, որը սահմանափակում է կոշտ թափոնների և կեղտաջրերի առաջացումը: Որպես ինքնաֆինանսավորվող կազմակերպություն, նրա հիմնական նպատակն է հնարավորինս նվազեցնել արտադրական ծախսերը: Ռեսուրսների արդյունավետության և ավելի մաքուր արտադրության խնդիրները լուծելու շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» EU4Environment շրջանակներում (2019-2024):

Առավելություններ

1
2 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացված ծախսերի կրճատման վրա)

2
Տարեկան 1,8 տոննա կոշտ թափոնների կրճատում

3
Միջին ետգնման ժամկետ (երեք տարի)

4
Տարեկան 872,3 տոննա CO_2-ի կրճատում

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ երկուսին: Այս միջոցառումները միջինից բարձր ծախսատարության առաջարկություններ են:

ՌԱՄԱ տարբերակ 1: Ներհոսքի ջրի մաքրման համար երկու ուլտրամանուշակագույն լամպերի տեղադրում: Այս միջոցառումը կապահովի թարմ ներհոսքի ջրի ախտահանումը (5%) փակ ցիկլային համակարգում (95%) և կկանխի ձկների վարակը:
ՌԱՄԱ տարբերակ 2: Չոր հումուսի արտադրության համար չորացման համակարգի տեղադրում: Այս միջոցառումը թույլ կտա ընկերությանը արտադրել բարձրորակ պարարտանյութ կոյուղու մաքրման կայանից առաջացող օրգանական տիղմից և այն հետագայում վաճառել:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Ներհոսքի ջրի մաքրման համար երկու ուլտրամանուշակագույն լամպերի տեղադրում:
ՏԱՐԲԵՐԱԿ 2	Չոր հումուսի արտադրության համար չորացման համակարգի տեղադրում:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Տարբերակ 1:	25,385	22,232	3
Տարբերակ 2*:	1,740	720	3

*Միավորները բաղկացած են *150,000* ձկնկիթից, *128,000* թրթուրից և *12,220* ձկներից:

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Նյութեր (միավոր/տարի)**	Ջուր ($մ^3$/տարի)/%
Տարբերակ 1:	290,220	2,700,000/95
Տարբերակ 2:	/	/

** Միավորները բաղկացած են *150,000* ձկնկթից, *128,000* թրթուրից, *12,220* ձկներից և *3,250* փաթեթ կերից:

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ընդհանուր CO_2(տ/տարի)	Թափոններ (միավոր/տարի)***
Ընդհանուր:	872.3	293,450***

*** Միավորները բաղկացած են *3250* փաթեթ կերից, *150000* ձկան ձվից, *128000* թրթուրից և *12200* ձկներից:

“Մեր ընկերությունը բախվում էր արտադրության բարձր ծախսերին հետ: ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի շնորհիվ մենք սովորեցինք համակարգված կերպով կատարելագործել և արդիականացնել մեր արտադրական առօրյան՝ հիմնված ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության վրա: Ձեռնարկությունը նախատեսում է սովորել ամեն ինչ օրգանական սննդամթերքի արտադրության պահանջների մասին, գրավել նոր շուկաներ, որտեղ կա թարմ ձկան մեծ պահանջարկ, և կազմակերպել կանոնավոր արտահանում: ՌԱՄԱ նախագիծը մեզ ոգեշնչել է ՌԱՄԱ միջոցառումների հետագա իրականացման վերաբերյալ նոր գաղափարներով հանդես գալ, - ասաց տնօրեն պարոն Վարդան Մամիկոնյանը:”

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«ՍԵՎԱՆ ԱԿՎԱ»-ն** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:
© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն /Կովկաս
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.**7,** շենք **N 2, 0010,** Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-115-75-148